

- ✓ բնական գազի ներկրման և իրացման ծավալների աճ՝ ավելի քան 2 անգամ
- ✓ բաժանորդների թվի աճ՝ 5,1 անգամ
- ✓ գազաբաշխիչ ցանցի ընդլայնում՝ 2,2 անգամ
- ✓ պահեստավորված գազի ծավալների աճ՝ 2 անգամ
- ✓ պետրութե կատարվող վճարումների աճ՝ 11 անգամ
- ✓ կենսաթոշակային հիմնադրամ կատարվող վճարումների աճ՝ 7,5 անգամ

**1997-2009թթ. գործունեության ընթացքում նման ցուցանիշներ է արձանագրել այսօր Հայաստանի խոշորագույն հակառակումներից մեկը՝ «ՀայՈՒՍԳԱՎԱՐԴ» ՓԲԸ-ն, որը վերջին մի քանի տարվա ընթացքում արդեն 750մլն դոլարի ներդրում է իրականացրել:**

## **ՆՊԱՏԱԿ ՈՒՍԵՆՔ ՏԱՐԱԾԱՇԽԱՆՈՒՄ ՂԱՌԱԱԼ ԽՈՇՈՐ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**«ՀայՈՒՍԳԱՎԱՐԴ» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն Կարեն Կարապետյանը վստահեցնում է. եթե 2001 թվականին եղել ենք ընդամենը 18-20 տոկոսով գազաֆիկացված երկիր, ապա այսօր, հասնելով 93 տոկոս ցուցանիշի, առաջատար ենք ոչ միայն ԱՊՀ-ում, այլ նաև աշխարհի գարգածած շատ երկրների շարքում:**

-Պին. Կարապետյան, Զեր դեկավարած ընկերությունն այսօր գգալի նշանակություն ունի երկրի տնտեսական կյանքում, տնտեսական զարգացման գործում, այդ «Բարձունքին» հասնելու Զեր ուղին դժվարի՞ն է եղել: Ի՞նչ արդյունքներ եք արձանագրել Զեր գործունեության ընթացքում:

- Վերջին 5-6 տարիների ընթացքում արձանագրել ենք շատ տպավորիչ արդյունքներ: Նախևառաջ, Հայաստանը գազաֆիկացրել ենք 93 տոկոսով: Մինչդեռ 2001 թվականին գազաֆիկացման մակարդակը կազմում էր ընդամենը 18-20 տոկոս: Սեփական գազի պաշարներ չունեցող երկրներն այսօր շատ կցանկանային ունենալ գոնե 40 տոկոս գազաֆիկացում: Տարեվերջին գազի սպառողների թիվը հանրապետությունում կհասնի 600 հազարի: Արդեն իսկ գազաֆիկացված է 513 բնակավայր: Նման ցուցանիշներով ԱՊՀ երկրների շարքում մենք առաջինն ենք դեռ 2006 թվականից: Ավելին, Հայաստանը գազաֆիկացման մակարդակով առաջատար դիրքերում է նաև աշխարհում: Անգամ գազով հարուստ Ռուսաստանում միլիարդավոր դոլարների ծախսեր կապահանջվի 62 տոկոս գազաֆիկացման մակարդակ ապահովելու համար: Այդ առումով Հայաստանն ԱՊՀ-ում եզակի երկիր է՝ հաշվի առնելով, որ նման ցուցանիշներ ենք արձանագրել այն դեպքում, երբ ոչ սեփական գազ ունենք, ոչ էլ տրանզիտային երկիր ենք: Ավելին, նույնիսկ ներկա ճգնաժամի պայմաններում գազի համար ամենապարտաճանաչ վճարողը մեր երկիրն է: Անգամ Արևմտյան Եվրոպան ուշացումով է վճարում:

Զեմ կարող ասել, որ նման արդյունքների հասնելու մեր ուղին դժվար չի եղել: Ժամանակին շատերը, այդ թվում նաև մեր աշխատանքային թիմից, չին հավատում, որ կուտակված պարտքերի, գազի համար սահմանված ոչ այնքան տրամաբանական սակագնի և առանց շահութաբերության աշխատելու պարագայում կարող ենք լուրջ արդյունքներ ակնկալել և մեր ուսերին հսկայական բեռ

Վերցնել: Սակայն մեզ հաջողվեց տպավորիչ արդյունքների հասնել: Այսօր Հանրապետությունում մեր Ընկերությունը շարունակում է մնալ առաջատարը կանոնադրական կապիտալի, ակտիվների և իշխանական միջոցների մեծությամբ: Բացի այդ, ներկայումս «ՀայՈՒՍԳԱՎԱՐԴ»-ն ունի հանրապետությունում խոշորագույն ներդրումային ծրագրերի փաթեթը: Վերջին մի քանի տարվա ընթացքում մեր կողմից կատարված ներդրումները կազմում են ավելի քան 750 մլն ԱՄՆ դոլար: Այս լայանածավալ ներդրումների շնորհիվ զգալիորեն բարձրացել է գազի տնտեսության հուսալիությունն ու անվտանգությունը, լուրջ քայլեր են արվել բիզնեսի դիվերսիֆիկացման, ընկերության ֆինանսական կայունության բարձրացման ուղղությամբ:

- Պրմ Կարապետյան, թեպետ արծանագրված ցուցանիշներն արդեն իսկ բավական խոսուն են, սակայն ենթադրում եմ, որ դեռ շատ անելիքներ կան: Ի՞նչ նոր քայլեր եք մտադիր ծեռնարկել առաջիկայում:

- Նոր որակի խնդիրներ պետք է լուծենք. նպատակ ունենք դառնալ տարածաշրջանում խոշոր էներգետիկ ընկերություն, ավելի ճիշտ, ես կասեի գրեթե դարձել ենք: Տարածաշրջանում մեր դիրքերն ամրապնդելու համար շատ մեծ շանսեր ունենք՝ մասնավորապես, ազդեցություն ունենալ էներգետիկ շուկայի վրա՝ հատկապես էլեկտրաէներգիայի արտահանման առումով:

Չնայած ֆինանսական ճգնաժամի ազդեցությանը և հետևանքներին, մենք հետևողական շարունակում ենք ներդրումներ կատարել՝ ներգրավելուվ նաև վարկային լուրջ միջոցներ: Ընթացիկ տարում 50 մլն Եվրո չափով փոխառության համաձայնագիր ունենք KFW բանկի հետ, 10-15 մլն Եվրո՝ Իրանի արտահանման զարգացման բանկից, 40մլն դոլար էլ ակնկալում ենք «Գազպրոմբանկի» հետ բանակցությունների արդյունքում: Այս տարվա մեր առաջնային կարգախոսը հետևյալն է. շահութաբերության ապահովումն իհարկե շատ լավ է, սակայն, հաշվի առնելով ճգնաժամը, դա այնքան էլ չենք կարևորում, ավելի ճիշտ՝ այն թիվ 1 խնդիր չենք դիտում: Այսօր կարևորագույն հարցը մեր ֆինանսական հոսքերի ճիշտ կառավարման ապահովումն է, որպեսզի ոչ մի ներդրումային ծրագրում ֆինանսական միջոցների դեֆիցիտ չունենանք: Եվ մենք վստահ ենք, որ այդպես էլ կլինի:

- Պրմ Կարապետյան, ի՞նչ եք կարծում, իրանական գազի մատակարարումն իրո՞ք կարող է այլընտրանք լինել ռուսական գազին, թե դա պարզապես այլընտրանք կարող է դառնալ որոշակի դեպքերում, եթե, ասենք, ինչ-ինչ պատճառներով ռուսական գազի մատակարարումը ժամանակավորապես դադարում է:

- Բնականաբար, մեզ շատ ավելի անվտանգ ենք զգում, եթե ունենք գազի մատակարարման երկրորդ գիծը, սակայն միևնույն է, այլընտրանք որպես այդպիսին իրանական գազը չի կարող հանդես գալ, քանի որ ռուսական գազը մեզ համար շատ էժան է: Նման գնով այսօր ոչ մի երկիր մեզ գագ չի մատակարարի:

- Պրմ Կարապետյան, «ՀայՈՒՍԳԱՎԱՐԴ» այսօր ոչ միայն թիվ 1 ներկրողն է համարվում, այլև պարբերաբար հայտնվում է սոցիալական ապահովագրության հարկի վճարման գծով խոշոր հարկատումների ցանկի երկրորդ կամ երրորդ հորիզոնականներում: Հետաքրքիր կլիներ լսել որպես գործարար Զեր գնահատականը հարկային և մաքսային համակարգերի մասին: Զեր կարծիքով արդյունավետ է երկու՝ հարկային և մաքսային ծառայությունների՝ մեկ միասնական համակարգում գործելը:

- Ես կասեի, որ «Հայռուսգազարդ»-ը նաև թիվ մեկ հարկատուն է՝ հաշվի առնելով մեր 5-6 դուստր ձեռնարկությունների վճարած հարկերի հանրագումարը, քանի որ ցանկում նրանք որպես առանձին հարկատուններ են հանդես գալիս: Սակայն, մենք ոչ միայն արձանագրում ենք, որ այսօր թիվ մեկ հարկատուն ու ներմուծողն ենք, այլև մեզ մոտ մշտապես առկա է այդ ցանկությունը՝ լինել առաջին հարկ վճարողը: Գուցե այդ ցանկությունը անտրամաբանական թվա մենեցմենտի տեսանկյունից, բայց համահունչ է պատրիոտիզմին: Մեծ հաշվով՝ մեր գործառույթը ոչ թե հարկ վճարելն է, այլ շահույթ ապահովելը: Այդուհանդերձ, հարկեր չվճարելու երևույթին ին վերաբերմունքը բացասական է: Ինչ-որ տեղ կարող ես ներողամտորեն վերաբերվել, երբ հայ գործարար փորձում է քիչ վճարել հարկերն այլ երկրի տարածքում, սակայն մեր երկրում նման կեցվածք հանդես բերելը ես անընդունելի եմ համարում:

Ինչ վերաբերում է երկու ծառայությունների՝ մեկ միասնական համակարգում գործելուն, ապա կարծում եմ, որ ներկա փուլում դա կարող է շատ արդյունավետ լինել, այսինքն՝ խիստ կարևոր է, երբ ամբողջ ինֆորմացիան վերահսկվում և կառավարվում է մեկ կենտրոնից՝ սկսած անմիջապես սահմանից: Միգուցե կգան ժամանակներ, երբ փոփոխության անհրաժեշտություն կզգացվի, սակայն առայժմ, ին կարծիքով, այսպես ավելի նպատակահարմար է: Սխալ է, երբ նման պարագաներում սկսում են համեմատություններ անցկացնել այլ երկրների հետ և ասել. Եթե աշխարհում չկան կամ քիչ են այս երկու կառույցների՝ միասնական համակարգում գործելու օրինակները, ապա մեզ մոտ էլ պետք է այդպես լինի: Չպետք է մոռանալ, որ մենք փոքր երկիր ենք, իսկ փոքր երկիրն իր առանձնահատկություններն ունի: Օրինակ, Ռուսաստանն ունի գազի սակագների 6 տարբեր գոտիներ: Այսինքն՝ եթե տարածքն ավելի մոտ է գազի մատակարարման կետին, ապա այնտեղ սակագներն ավելի էժան են: Դա նույնն է, եթե մենք էլ ասենք, որ Սյունիքն ավելի մոտ է Իրան-Հայաստան գազատարին, ուրեմն գազի մատակարարումն այնտեղ պետք է ամենացածր սակագինն ունենա: Բայց մենք իհարկե այդպես չենք աշխատում. հանրապետության բոլոր տարածքներում գործում է մեկ ֆիքսված սակագին: Այսինքն՝ չպետք է համեմատել: Փոքր երկրում ի վերջո շատ կառավարիչներ կամ ղեկավարներ ունենալու անհրաժեշտությունն էլ է նվազում, այսինքն՝ ըստ իս, ավելի նպատակահարմար է ունենալ հարկային ու մաքսային համակարգերի մեկ ղեկավար, քանի որ այդ մոդելը մեր երկրի պարագայում առավել արդյունավետ կաշխատի:

-Պրմ Կարապետյան, գործարարի տեսանկյունից ի՞նչ եք կարծում, որո՞նք են այն առաջնահերթ խնդիրները, որոնք այսօր անհրաժշտ է լուծել հարկային- մաքսային համակարգերում: Դուք, օրինակ, ինչպե՞ս եք տեսնում պետություն-հարկատու փոխհարաբերությունները:

-Ինձ թվում է ամենաառաջնահերթ խնդիրը արդարությունն է, հավասար պայմանների ապահովումը: Եթե մեկի նկատմամբ ընդգծված ուշադրություն է ցուցաբերվում, մյուսի նկատմամբ հակառակը, ապա միշտ էլ խնդիրներ են ծագում: Իսկ երբ հարկային-մաքսային ծառայությունների գործունեության հիմքում հավասարության և արդարության սկզբունքերն են, ապա դժգոհողների թիվը կնվազի: Բողոքողներ, իհարկե, ամեն դեպքում կլինեն, բայց արդեն սուբյեկտիվ բնույթ կկրեն. Եթե որևէ գործարար ցանկանում է մյուսի նկատմամբ արտոնյալ պայմաններում աշխատել, իսկ հարկայինն այդ ցանկությանն ընդառաջ չի գնում, դա չի նշանակում, որ այդ կառույցը վատ է աշխատում:

Կոնկրետ մեր ընկերության նկատմամբ այսքան ժամանակ հարկային կամ մաքսային ծառայությունների աշխատակիցների կողմից որևէ անուշադիր կան անհարգալից վերաբերմունքի դրսնորում չեմ նկատել, ինչը նաև պարտավորեցնող է: Մենք հարկատու-գործարար փոխհարաբերություններից, ես կասեի՝ համագործակցությունից գոհ ենք:

Այս ամենից բացի, շատ կցանկանայի, որպեսզի հարկային-մաքսային մարմինները միայն կատարողի գործառույթներ չունենային: Նրանց կարգավիճակն այսօր այդպիսին է: Ես շատ կցանկանայի, որպեսզի այդ կառույցները ևս ընդգրկված լինեին որոշում կայացնողների մեջ, քանի որ հարկերի հավաքագրումն այդպես առավել արդյունավետ կլիներ: Պլանը տալիս եմ՝ պետեկանուտների կոմիտեն պետք է կատարի, սակայն եթե ասում է, որ պլանն իրատեսական չէ, ապա այդ կարծիքը նույնպես հարկավոր է հաշվի առնել:

-2008-ի վերջում մեծ իրադարձություն դարձավ Ռուսաստանի և Եվրոպայի ամենախոշոր բանկերից մեկի՝ «Գազպրոմբանկի» ի հայտ գալը հայաստանյան շուկայում: Ինչպես հայտնի է, այդ որոշումը պայմանավորված էր ռուսական կազմակերպությունների՝ Հայաստանի տնտեսության մեջ ներդրման աճով: «Գազպրոմբանկը» դարձավ «Առէկսիմբանկի» 100 տոկոս բաժնետերը, և այսօր այդ հեղինակավոր բանկի խորհուրդը գլխավորում եք Դուք: Ո՞րն է Ձեր տեսակետը Հայաստանի բանկային համակարգի վերաբերյալ:

- Հայաստանի ամբողջ բանկային համակարգն այսօր սպասարկման խնդիր ունի, բոլոր հայաստանյան բանկերը միասին՝ մեր ամբողջ վարկային փաթեթը չեն կարող սպասարկել: Կարծում եմ՝ այսօր կարևոր խնդիր է խոշոր բանկեր ունենալը, որոնք կկարողանան սպասարկել խոշոր հաճախորդներին, կամ նույնիսկ ավելի լավ կլիներ, որ տեղի բանկային համակարգը ոչ միայն Հայաստանի, այլև արտերկրի հաճախորդին կարողանար սպասարկել:

Չպետք է հույսը դնել միայն ներքին շուկայի վրա. այն փոքր է: Օրինակ գազաֆիկացման առումով այդ պատճեշը հաղթահարել ենք. տարածաշրջանում համարվում ենք միակը: Մեր էներգետիկ համակարգն այսօր զարգացման մեծ հնարավորություններ ունի այն դեպքում, երբ հարևան բոլոր երկրները էներգետիկ դեֆիցիտի մեջ են, ուրեմն ինչու՞ չօգտագործենք նաև մեր բանկային ներուժը: Այսօր մեզ շատ ավելի նպատակահարմար է ունենալ ոչ թե 20-22 փոքր բանկ, այլ 5 խոշոր, թեկուզե դրան հասնենք բանկերի վերամիավորման արդյունքում: Կարծում եմ, շատ ավելի լավ կլիներ մեզ անհրաժեշտ վարկը վերցնել ոչ թե արևմտյան բանկերից, այլ մեր բանկերից և տոկոսադրույթներն էլ վճարել մեր՝ հայաստանյան բանկերին՝ հարստացնելով ոչ թե արտերկրի, այլ մեր կապիտալը:

-Պրն. Կարապետյան, «Հայ՛՛Ռուսգազարդը» ստեղծվել է ՀՀ էներգետիկայի նախարարության, «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության և «Էտերա» միջազգային էներգետիկ կորպորացիայի կողմից: Այսինքն՝ Ձեր կազմակերպությունը կորպորատիվ քաղաքացի է համարվում, ինչը ենթադրում է սոցիալական պատասխանատվություն, որն էլ իր հերթին ներառում է մի շարք կարևոր սկզբունքներ: Կորպորատիվ գործունեության մասով ի՞նչ նոր ձեռքբերումներ եք արձանագրել:

- Բավականին լուրջ սոցիալական ծրագրեր ենք իրականացնում՝ աջակցելով ուսանողներին. լավագույններին հնարավորություն ենք ընձեռում ուսանելու Հայաստանի և Ռուսաստանի՝ նավթի և գազի

հատուկ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ ուսման ընթացքում ապահովելով նաև նրանց կրթաթոշակը: Ավարտելուց հետո նրանց ընդգրկում ենք համակարգում: Ուսմանը և կադրերի որակի բարձրացմանը շատ մեծ տեղ ենք տալիս, կարելի է ասել՝ դա ընկերության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կարևորագույն ուղղություններից մեկն է: Պարբերաբար վերապատրաստման դասընթացներ ենք կազմակերպում մեր աշխատակիցների համար տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում: Այսօր լավ կառավարչի պակաս ունենք, մինչդեռ լավ կառավարիչը կարող է անգամ հեղաշրջում իրականացնել համակարգում՝ դրական իմաստով, իհարկե: Բավականին լուրջ փոփոխությունների ենք ենթարկել մեր կառավարման գործընթացը և առաջիկայում հանդես կգանք ծառայությունների մատուցման մեկ միասնական համակարգով, որը նոր կորպորատիվ մշակույթի ներդրման արդյունք է:

Միջոցառումներ ենք մշակում աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ, ինչը ընկերության կորպորատիվ քաղաքականության կարևորագույն սկզբունքներից է: Մեր աշխատակիցներին մի շարք ծառայություններից անվճար օգտվելու հնարավորություն ենք ընձեռել, իրականացնում ենք ապահովագրում հատկապես կյանքի համար վտանգավոր գործունեությամբ գրադարձ մեր աշխատակիցների համար:

Սոցիալական փաթեթում ներառված մեր ծրագրերից կառանձնացների նաև հետևյալ աշխատանքները. Երևանում բազմաբնակարան շենք ենք կառուցում մեր աշխատակիցների համար, սակայն քաղաքից դուրս ևս շենք կառուցելու մտադրություն ունենք: Մշակման ընթացքի մեջ է կորպորատիվ թոշակային կուտակային ֆոնդի ստեղծումը: Այդպիսով ցանկանում ենք համակարգի աշխատողի համար ստեղծել միջինից շատ ավելի լավ պայմաններ: Կուտակային ֆոնդի ստեղծումն իրականում բարդ գաղափար է, նպատակը հետևյալն է՝ այսօր գումար տուր՝ վաղը լավ կապրես: Սակայն հիմնական դժվարությունն այն է, որ այսօր դեռևս ոչ ոք «տասը-քսան տարի հետո»-ին չի հավատում. կյանքն ավելի խոցելի է դարձել: Այդուհանդերձ, հնարավորինս կփորձենք գաղափարն իրականություն դարձնել:

-Պրմ Կարապետյան, որպես բիզնեսմեն, ունե՞ք արդյոք այնպիսի սկզբունքներ, որոնք երեք և ոչ մի պարագայում չեք խախտի: Բիզնեսմենին ամենաանհրաժեշտ հատկանիշներն ըստ Ձեզ որո՞նք են:

-Կարծում եմ բիզնեսմենը երեք հիմնական հատկանիշ պետք է ունենա. կարողանա իրավիճակին հենց սկզբից ճշգրիտ գնահատական տալ. Եթե ախտորոշումն ի սկզբանե սխալ է, ապա ինչ դեղով էլ բուժես, միևնույն է, չի բուժվի: Երկրորդ՝ ունակ լինի փոփոխությունների, որովհետև չկա այնպիսի մոդել, որն անփոփոխ լինելու դեպքում անընդհատ արդյունավետություն ապահովի. կյանքը փոխվում է և պետք է շարունակ ստեղծագործական և ճկում մոտեցում հանդես բերել, և երրորդ՝ անպայման պետք է հայրենասեր լինի. ոչ միայն հայրենիքի, այլև, առաջին հերթին, այն թիմի, այն ձեռնարկության հանդեպ, որտեղ աշխատում է, այլ կերպ ասած՝ ունենա նաև կորպորատիվ հայրենասիրություն: Եթե մենք սակագին ենք ուզում փոխել, շատ հաճախ ասում են, թե չենք մտածում ժողովրդի մասին, սակայն դա ամենսին այդպես չէ. Եթե առաջնայինը միայն մեր շահը լիներ, մենք այլ մեթոդների օգնությամբ էլ դա կարող էինք երևան հանել, սակայն կազմակերպության շահերի մասին էլ չես կարող չմտածել, ի վերջո, դա հենց մեր հիմնական գործառույթներից է:

Շատերը մեզ վերաբերվում են որպես ոչ հայկական կազմակերպության, որտեղ ուսական բաժնեմասը տեսակարար կշիռ ունի, սակայն ես ուզում եմ կրկին ասել՝ ոչ, մենք հայկական

կազմակերպություն Ենք, քանի որ հարկ վճարում Ենք Հայաստանում, աշխատավարձը տալիս Ենք Հայաստանի քաղաքացուն, մենեղմենթը հայկական է, բրենդը հայկական է, ի վերջո, Աերոդրումներն իրականացնում Ենք Հայաստանում: Մենք պետք է այդ մենքալիտետը փոխենք, մեր թիմը պակաս հայրենասեր թիմ չէ:

Ինչ վերաբերում է սկզբունքներին, ապա, որպես բիզնեսմեն, ինձ համար ամենաառաջնահերթ սկզբունքը՝ սուտ չասելն է: Սուտ ասելը երբեք չի ներվում: